

ՍԵՂԱ ՂԱԶԱՐՅԱՆ

Ֆինանսներ, բակալավրիատ, 2-րդ կուրս

ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՐԱ

Հիմնաբառեր. բանկային համակարգ, շահույթ, կապիտալ, շահութաբերություն, դրամավարկային քաղաքականություն

ՀՀ տնտեսության յուրաքանչյուր ճյուղ, լինելով համաշխարհային տնտեսության մի մասը, կրում է աշխարհում տվյալ ժամանակահատվածում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքները: Այժմ այդ ճյուղերից բանկային համակարգն ամենաարագն է արձագանքում տնտեսական փոփոխություններին և տնտեսության շարժիչ ուժերից մեկն է: Աշխատանքը նվիրված է արդի պայմաններում ՀՀ բանկային համակարգի զարգացման միտումների ու արտաքին ազդեցությունների հետևանքով առաջացած փոփոխությունների ուսումնասիրմանը:

Առաջարկվում է կիրառել հեջավորման եղանակներից ներդրումային պորտֆելի կրկնօրինակումը, որը հնարավորություն կտա խուսափելու բարձր ռիսկային ակտիվներով պայմանավորված հնարավոր կորուստներից:

Ներածություն: ՀՀ ֆինանսական շուկայի խոշորագույն մասնակիցն է բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 83.5%-ը: 31.12.2022 դրությամբ ընդհանուր ակտիվները կազմել են 8.409 մլրդ ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 7.093 մլրդ ՀՀ դրամ:

2022 թ. բանկերում աճել են նորմատիվային ցուցանիշները: Այսպես, հիմնական կապիտալի բավարարության նորմատիվը (N1/1՝ նվազագույն 9%) շուկայում միջին հաշվով բարձրացել է 23,12%-ից մինչև 28,55%, ընդհանուր կապիտալի բավարարության նորմատիվը (N1/2՝ նվազագույն 12%)՝ 24,88%-ից մինչև 29,91%, ընդհանուր իրացվելիության նորմատիվը (N2/1՝ նվազագույն 15%)՝ 35,70%-ից մինչև 37,61%, ընթացիկ իրացվելիության նորմատիվը (N2/2՝ նվազագույն 60%)՝ 157,79%-ից մինչև 205,95%¹:

Վերջին տարիներին տեղի են ունեցել իրադարձություններ, որոնք տնտեսության, այդ թվում՝ բանկային համակարգի համար որոշակի փոփոխությունների պատճառ են դարձել.

- 2020 թ. COVID 19-ով պայմանավորված՝ փոփոխություններ են եղել բանկերի կողմից տրված վարկերի և պարտավորությունների պայմաններում: Համավարակի ազդեցությունը թեև թուլանում է, սակայն ամբողջովին չի հաղթահարվում նաև 2021-ին, ինչը հնարավոր ֆինանսական ռիսկերի պատճառ կարող էր հանդիսանալ:
- Ռուս-ուկրաինական լարված հարաբերությունները 2022 թ. փետրվարի 24-ին մտան ռազմական փուլ: Ծավալվող ռազմական գործողություններն իրենց հետևանքներն են ունենում ոչ միայն պատերազմող երկրների, այլև դրանց հետ տնտեսական հարաբերություններ ունեցող երկրների վրա:

¹ https://finport.am/full_news.php?id=47517&lang=1

Գրականության ակնարկ: Բանկային համակարգի ֆինանսական կայունության առումով կարևորվում է բանկային ռիսկերի ճիշտ գնահատումն ու կառավարումը: Լ. Հ. Բադանյանն¹ առանձնացնում է ռիսկի կառավարման հետևյալ մեթոդները՝

- բազմազանեցում կամ տարբերակում
- ծածկույթի առկայություն
- ապահովագրություն
- մարքեթինգ և կանխատեսումներ
- նորմատիվների և ճեղքվածքի կառավարում

Մ. Տոնիկյանը կարծում է², որ ակտիվների ավելացմանը զուգընթաց ընկերության շահութաբերությունը շարունակական անկում է ապրում, ինչը կապվում է ամբողջ համակարգում չաշխատող վարկերի հետ: Բանկային համակարգի չափազանց արագ աճը համարվում է բարձր ռիսկերի և անկայունության արդյունք, որի լուծման համար առաջարկվում է օրենսդրական մակարդակով սահմանափակել բանկային ակտիվների տարեկան աճը:

Վարկային ռիսկի վրա ազդող գործոնները չափելի դարձնելու և ստացված արդյունքը ռիսկի ավելի արդյունավետ կառավարման նպատակով **Ա. Հակոբյանը և Ա. Համբարձումյանը կարևորում են³** Մերտոնի մոդելի կիրառման անհրաժեշտությունը, որի միջոցով բանկերն ավելի շատ վարկային ներդրումներ կկատարեն, կխթանեն վարկային ներդրումները բարձր ռիսկային ոլորտներում: Մերտոնի մոդելի հիմնական ենթադրությունն այն է, որ ձեռնարկությունը ղեկավարի է ենթարկվում, երբ պարտավորության մարման պահին դրա ակտիվների իրական արժեքը ցածր է պարտավորության մարման պահին իր պարտավորության արժեքից:

Կատարված հետազոտության արդյունքում արդի պայմաններում կարելի է առանձնացնել բանկային ռիսկերի կառավարման բազմազանեցման մեթոդի թերի կիրառումը՝ կապված վերջին տարվա ընթացքում արտարժույթային գործարքների կտրուկ աճի հետ:

Հետազոտության մեթոդաբանություն: Իրականացվել է հորիզոնական վերլուծություն՝ համեմատական է տարվել բանկային ոլորտում 2021 և 2022 թթ. գրանցված ցուցանիշների միջև: Վերլուծություն իրականացնելու նպատակով կիրառվել է համադրության (սինթեզի) մեթոդը, բանկային համակարգի ֆինանսական վիճակը պատկերելու նպատակով ուսումնասիրվել են ֆինանսական հաշվետվության առանձին տարրեր:

Վերլուծություն: Հայաստանում այժմ գործում են 18 առևտրային բանկեր, որոնց վերահսկում է Կենտրոնական բանկը: Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ բանկերի տարեկան զուտ շահույթը 2021-2022 թթ.:


2021 թ., գտնվելով հետպատերազմյան ժամանակաշրջանում և դեռևս կրելով համավարակի հետևանքները, բանկերը կարողացել են հաղթահարել առաջացած դժվարությունները և 2021-ին ապահովել են 87 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ՝ 2020-ի 60 մլրդ ՀՀ դրամի փոխարեն:

¹ Տե՛ս Լ. Հ. Բադանյան, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Եր., 2010, էջ 401:

² <https://asue.am/upload/files/science/banber/2022-year-4/2.pdf>

³ <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-3/2.pdf>

2021 թ. շահույթ չի ստացել միայն Յունիբանկը: Բանկի ամենամեծ ծախսը, նախորդ տարվա համեմատ, եղել է արժեզրկման ծախսը՝ 13,073,327 ՀՀ դրամ¹: Ամենամեծ ծավալն է զբաղեցնում հաճախորդներին տրված վարկերից և փոխառություններից արժեզրկման ծախսը՝ 13,071,980 ՀՀ դրամ: Արժեզրկման ծախսի վրա մեծապես ազդել է Հայաստանում գրանցված բարձր գնաճը, որը, ըստ երևույթին, Հայաստան է ներթափանցել դրսից: Գնաճը 2020 թ. համեմատությամբ կազմել է 7.2%: Քանի որ Հայաստանը էներգակիրների, շինանյութի, շաքարավազի, ձեթի և լայն սպառման ապրանքների գծով ներմուծող երկիր է (ունի 56% ինքնաբավություն), ուստի համաշխարհային շուկայում դրանց գների աճը մեծ ազդեցություն ունեցավ հայաստանյան շուկայի վրա: Կարևոր է նշել նաև տարվա սկզբում դոլարի նկատմամբ դրամի արժեզրկումը, որը նույնպես երկրում ինֆլյացիայի պատճառ դարձավ՝ իր հետևանքները թողնելով բանկերի գործունեության վրա:



Գծապատկեր 1. ՀՀ առևտրային բանկերի զուտ շահույթը 2021-2022 թթ.²

2022 թ. շահույթի մեծ աճ ենթ տեսնում, որը որոշ բանկերի համար նույնիսկ թռիչքային է: Բանկերում, նախորդ տարվա համեմատ, գրանցվել է երեք անգամ ավելի շատ զուտ շահույթ՝ 255.6 մլրդ ՀՀ դրամ, ինչը պայմանավորված է արտաքին ազդեցությունների հետևանքով խոշոր փոփոխություններով: 2022 թ. նոյեմբերի 9-ին «Ֆասթ Կրեդիտ» վարկային կազմակերպությունը ձեռք է բերել ՀՀ կենտրոնական բանկի՝ բանկային գործունեու-

¹ <https://www.unibank.am/repo/iblock/d4d/16nl7al681mdifx7por37rk2s5pq8l8z.pdf> (20.03.2023, 21:40)

² <https://modex.am/net-profit-2022/> (20.03.2023, 21:37)

թյուն ծավալելու լիցենզիա և գրանցվել որպես «Ֆասթ Բանկ» ՓԲԸ: Ֆասթ Բանկի զուտ շահույթը 2022 թ. կազմել է 7.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա 4.8 մլրդ ՀՀ դրամի փոխարեն¹:

Տնտեսությունում լուրջ առաջընթաց նկատվեց, ինչն իր հերթին կապված էր այլ պետությունների տնտեսական իրավիճակի հետ: Ռուս-ուկրաինական ռազմական հակամարտության հետևանքով ռելյանտների (տեղափոխվածների) աճը Հայաստանում հանգեցրեց ինչպես տնտեսության շատ հատվածներում, այնպես էլ բանկային հատվածում որոշակի փոփոխությունների: Ռուսաստանի քաղաքացիների՝ Հայաստան տեղափոխվելը նպաստեց տրանսֆերտների և հետևապես՝ շուկայում արտարժույթի աճին:

Այսպես, վերջին մեկ տարվա ընթացքում զգալիորեն աճել են բանկերի եկամուտները արտարժույթային գործառնություններից, տարադրամի փոխանակումից և այլ ոչ տոկոսային եկամուտներից: Ընդհանուր առմամբ, բանկերի ոչ տոկոսային եկամուտները, նախորդ տարվա համեմատ, ավելացել են 4 անգամ: Իրենց ազդեցությունն են ունեցել նաև Ռուսաստանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները՝ կապված որոշ ռուսական բանկերում SWIFT համակարգի անջատման հետ, որի հետևանքով ռելյանտները ստիպված եղան իրենց միջոցները պահել հայաստանյան բանկերում: Վերջին մի քանի ամսում բարձրացվեցին նաև ՀՀ բանկերում սպասարկման վճարները, քանի որ ռելյանտների թվի աճը հանգեցրել էր նաև բանկային գործառնությունների մեծ պահանջարկի, ինչպես նաև գումարների մեծ ներհոսքն ու շրջապտույտը բանկերում կարող են հանգեցնել փողերի լվացման ռիսկի²:

2022 թ. բանկերից միայն երկուսն են, նախորդ տարվա համեմատ, ավելի քիչ շահույթ գրանցել, իսկ ՎՏԲ բանկը վնաս է կրել 1859 մլն ՀՀ դրամի չափով: ԱՄՆ-ի կողմից կիրառվող պատժամիջոցների հետևանքով ՎՏԲ բանկի ակտիվները սառեցվել էին, որն անցանկալի հետևանք ունեցավ բանկի գործունեության վրա: Բանկը վաճառեց իր վարկային պորտֆելի մի մասը: Արդշինբանկը համաձայնություն է ձեռք բերել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի հետ՝ վերջինիս սպառողական վարկերի մանրածախ պորտֆելի մի մասի փոխանցման վերաբերյալ: Գործարքի ծավալը կազմում է 24 մլրդ ՀՀ դրամ³: Ձեռք բերված համաձայնությամբ կապահովվի ավելի քան 56.000 հաճախորդների բանկային սպասարկումը՝ տեղական և միջազգային կանոնների բոլոր պահանջներին համապատասխան:

2022 թ. ընթացքում շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել է 9 բանկ՝ ընդհանուր 35 մլրդ ՀՀ դրամով⁴.

- Արդշինբանկ – 17.2 մլրդ ՀՀ դրամ,
- Ինեկոբանկ – 6 մլրդ ՀՀ դրամ,
- ԱԿԲԱ Բանկ – 3.3 մլրդ ՀՀ դրամ,
- ԱրարատԲանկ – 3 մլրդ ՀՀ դրամ,
- Ֆաստ Բանկ – 2 մլրդ ՀՀ դրամ,


¹ <https://modex.am/net-profit-2022/> (20.03.2023, 21:42)

² <https://hetq.am/hy/article/152421> (20.03.2023, 21:51)

³ <https://www.vtb.am/am/about-bank/news-view/vtb-armeniia-prodal-chast-kreditnogo-portfelja-zaoardshinbank> (20.03.2023, 21:57)
<file:///C:/Users/User/Desktop/1674458937-Հայաստանի%20բանկային%20համակարգի%20ֆինանսական%20վերլուծություն%202022թ.%20.pdf> (20.03.2023, 22:01)

- Հայէկոնոմբանկ – 1.38 մլրդ ՀՀ դրամ
- Յունիբանկ – 0.98 մլրդ ՀՀ դրամ,
- Կոնվերս Բանկ – 0.51 մլրդ ՀՀ դրամ,
- Էվոկաբանկ – 0.6 մլրդ ՀՀ դրամ:

Հայաստանի բանկերի միության կողմից ներկայացված հաշվետվությունների համաձայն՝ 2021 թ. բանկային համակարգի՝ ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները, նախորդ տարվա համեմատությամբ, աճել են և կազմել համապատասխանաբար՝ 1.29 և 9.52% (գծապատկեր 2):




Գծապատկեր 2. Բանկային համակարգի շահութաբերությունը՝ ըստ ակտիվների և ըստ կապիտալի 2021 թ. և 2022 թ.¹

Ընդ որում, 2021 թ. բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվների մեջ կազմել է 35.58%: 2022 թ. բանկային համակարգի RoA-ն, 2021-ի համեմատ, ավելացել է 2.21%-ով, իսկ RoE-ն՝ 12.53%-ով:

Գծապատկեր 3-ում ներկայացված ROAE ցուցանիշը 2022 թ. աճել է ավելի քան 3 անգամ, ինչը զուտ շահույթի աճի հետևանք է:

2022 թ. ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է 372 մլրդ ՀՀ դրամով կամ 40%-ով ու կազմել 1.316 մլրդ ՀՀ դրամ: Իսկ կանոնադրական կապիտալը (ներառյալ էմիսիոն եկամուտը) աճել է 162 մլրդ ՀՀ դրամով:

¹ https://uba.am/upload/bankain_hamakarg_tverov/2022/Armenian_Banking_System_In_Figures_31.12.2022.pdf (20.03.2023, 22:35)




Գծապատկեր 3. Զուր շահույթ/ընդհանուր կապիտալ հարաբերակցության (ROAE) համեմատականը, 2022 թ.¹

Նշված աճը հիմնականում պայմանավորված է Հայբիզնեսբանկի կանոնադրական կապիտալի աճով, որն ավելացել է շուրջ 128 մլրդ ՀՀ դրամով: Բանկի նոր բաժնետերերն են «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ՍՊԸ-ն (75% բաժնեմաս) և «Բնակարան երիտասարդներին» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն ՓԲԸ-ն (25% բաժնեմաս): Պայմանավորված է նաև Ֆաստ Բանկի կապիտալի աճով՝ 23 մլրդ ՀՀ դրամով (գծապատկեր 4):


Առ 31.12.2022-ը ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է 4.345 մլրդ ՀՀ դրամի և կազմում է ընդհանուր ակտիվների 52%-ը: ՀՀ բանկերը 2022-ի ընթացքում 1.6 միլիարդ դոլարի ներդրումներ են կատարել ՀՀ-ից դուրս: Իսկ 2022 թ. նոյեմբերի վերջի դրությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերում առևտրային բանկերի կողմից կատարված ներդրումները կազմել են շուրջ 1.4 տրիլիոն ՀՀ դրամ:

¹ <file:///C:\Users\User\Desktop\1674458937-Հայաստանի%20բանկային%20համակարգի%20ֆինանսական%20վերլուծություն%202022թ.%20.pdf> (21.03.2023, 21:19)



Գծապատկեր 4. Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն, 31.12.22 և 31.12.21 (մլն ՀՀ դրամ)¹

Խոսելով կապիտալի մասին՝ հարկ է նշել նաև, որ բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը¹⁰ 2022 թ. ընթացքում նվազել է 101 մլրդ ՀՀ դրամով կամ 23%-ով: Նվազման պատճառներից մեկը կարող է լինել ՀՀ ԿԲ-ի կողմից պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխությունը: Հաջորդիվ ներկայացված են ԿԲ վարած դրամավարկային քաղաքականության ցուցանիշները 2021-2022 թթ.:



Գծապատկեր 5. ՀՀ ԿԲ վարած դրամավարկային քաղաքականության ցուցանիշները 2021-2022 թթ.²

¹ <file:///C:/Users/User/Desktop/1674458937-Հայաստանի%20բանկային%20համակարգի%20ֆինանսական%20վերլուծություն%202022թ.%20.pdf> (21.03.2023, 21:20)

² <https://www.cba.am/am/SitePages/fmompinterestrates.aspx> (21.03.2023, 21:52)

2021-2022 թթ. ընթացքում ԿԲ-ն վարել է ռեստրիկցիոն դրամավարկային քաղաքականություն՝ համապատասխան տոկոսադրույքները բարձրացնելով 0.25-0.5%-ով: Միայն 2022 թ. մարտի 15-ի դրությամբ տոկոսադրույքները բարձրացվել են 1.25%-ով (գծապատկերում համապատասխանում է սուր գագաթին), ինչը պայմանավորված էր ռելյուկանտների թվի և հետևաբար՝ ինֆլյացիայի տեմպի աճով:

Տարեվերջին գնաճը կազմել է 8.6%¹, իսկ ԿԲ խորհուրդը անփոփոխ է թողել ԴՎԲ տոկոսադրույքը:

Եզրակացություն: Հետազոտության արդյունքում եզրահանգում ենք, որ, հաղթահարելով համավարակի հետևանքները, բանկային համակարգը 2021 թ. պահպանել է իր ֆինանսական կայունությունը, իսկ 2022-ին, հաղթահարելով նոր մարտահրավերները, տարին ավարտել է դրական ցուցանիշներով: Հետևաբար, բանկային համակարգի ֆինանսական վիճակը գնահատվում է կայուն, իսկ Կենտրոնական բանկի վարած դրամավարկային քաղաքականությունը՝ ոչ արդյունավետ:

Աշխարհաքաղաքական նոր պայմանները, նշված ձեռքբերումներից զատ, կարող են հանգեցնել նոր ռիսկերի, ինչպիսիք են.

- ներդրումային ռիսկը՝ կապված փոխարժեքների տատանման հետ, հաշվի առնելով այն փաստը, որ ՀՀ առևտրային բանկերը վերջին մեկ տարվա ընթացքում մեծ քանակությամբ ներդրումներ են կատարել օտարերկրյա արժեթղթերում,
- տնտեսական ռիսկը՝ պայմանավորված ինֆլյացիայի կտրուկ աճով,
- փողերի լվացման ռիսկը՝ պայմանավորված առևտրային բանկերում մեծ քանակությամբ արտարժույթի շրջապտույտի հետ:

Ռիսկերի կառավարման և ֆինանսական կայունության պահպանման համար անհրաժեշտ է կիրառել հեջավորման ներդրումային պորտֆելի կրկնօրինակման մեթոդը, որը հնարավորություն է տալիս տոկոսադրույքի ռիսկի չափումը և կառավարումը հիմնել ֆիքսված մարման ժամկետով և գնով ներդրումների վրա, մինչդեռ ավանդները չունեն պայմանագրային մարման ժամկետ կամ գին: Բանկն այս եղանակով կարող է ռիսկը հասցնել նվազագույնի՝ ներդրումները վերածելով պայմանագրային պարտավորությունների: Գոյություն ունեն կրկնվող պորտֆելների կառուցման երկու առավել հաճախ օգտագործվող մեթոդաբանություններ²՝ սահմանային ներդրումային ռազմավարություն և պորտֆելի ներդրումային ռազմավարություն: Նախընտրելի է պորտֆելի ներդրումային ռազմավարությունը, որը, ի տարբերություն առաջինի, ունի ճկուն տեղաբաշխման և մարման ժամկետի պարամետրեր, ինչը հնարավորություն է ընձեռում առավել օպտիմալ կառավարելու միջոցները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բադանյան Լ. Հ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Եր., 2010:
2. Բանբեր ՀՊՏՀ, Եր., 2022, N 4(70),
<https://asue.am/upload/files/science/banber/2022-year-4/2.pdf>
3. Բանբեր ՀՊՏՀ, Եր., 2021, N 3(63),

¹ <https://armstat.am/am/?nid=12&id=07001> (05.04.2023, 17:44)

² <https://zandersgroup.com/en/latest-insights/replicating-investment-portfolios/> (06.04.2023, 17:58)

- <https://asue.am/upload/files/science/banber/2021-year-3/2.pdf>
4. Հայաստանի բանկերի միություն, Հայաստանի բանկային համակարգը թվերով՝ 2022 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, Եր., 2023:
 5. <https://armstat.am/am/?nid=12&id=07001>
 6. <https://www.cba.am/am/SitePages/fmompinterestrates.aspx>
 7. https://uba.am/upload/bankain_hamakarg_tverov/2022/Armenian_Banking_System_In_Figures_31.12.2022.pdf
 8. <https://modex.am/net-profit-2022/>
 9. www.rumels.am
 10. <file:///C:/Users/User/Desktop/1674458937-ՅԱՅԱՍՏԱՆԻ%20ԲԱՆԿԱՅԻՆ%20ՅԱՄԱՐԳԻ%20ՖԻՆԱՆՍԱԿԱՆ%20ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ%202022թ.%20.pdf>
 11. https://finport.am/full_news.php?id=47517&lang=1
 12. <https://www.vtb.am/am/about-bank/news-view/vtb-armeniia-prodal-chast-kreditnogo-portfelia-zao-ardshinbank>
 13. <https://www.unibank.am/repo/iblock/d4d/l6nl7al681mdifx7por37rk2s5pq8l8z.pdf>
 14. <https://hetq.am/hy/article/152421>
 15. <https://zandersgroup.com/en/latest-insights/replicating-investment-portfolios/>

СЕДА КАЗАРЯН

Финансы , бакалавриат, 2-й курс

ВЛИЯНИЕ ГЕОПОЛИТИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ НА БАНКОВСКУЮ СИСТЕМУ РА

Ключевые слова: *банковская система, прибыль, капитал, рентабельность, денежно-кредитная политика*

Каждая отрасль экономики РА, являясь частью мирового хозяйства, несет на себе последствия изменений, происходящих в мире в данный период. Среди этих отраслей банковская система наиболее быстро реагирует на экономические изменения и является одной из движущих сил экономики. Работа посвящена изучению тенденций развития банковской системы РА в современных условиях и изменений, вызванных в результате внешних воздействий. Рекомендуется использовать метод верификации инвестиционного портфеля, что позволит избежать возможных потерь, вызванных высокорисковыми активами.

SEDA GHAZARYAN

2nd year Bachelor, Department of Finance

THE IMPACT OF GEOPOLITICAL CHANGES ON THE RA BANKING SYSTEM

Keywords: *banking system, profit, capital, profitability, monetary policy*

Every branch of the RA economy, being a part of the world economy, bears the consequences of the changes taking place in the world during the given period. Among these branches, the banking system is the fastest responding to economic changes and is one of the driving forces of the economy. This article studies the development trends of the RA banking system under modern conditions and the changes suffered as a result of external influences. It is recommended to use the replicating investment portfolios' method, which will enable us to avoid possible losses caused by high-risk assets.